ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Մանուկ Մկրտչյան

Նախաբան

Մեկ տարի առաջ ԿԳ նախարարությունը և ՀԲ կրթական ծրագրերի կենտրոնը (ԿԾԿ) ձեռնամուխ եղան հանրակրթության պետական չափորոշիչների մշակմանը: Այդ նպատակով մրցութային հիմունքներով ստեղծվեց աշխատանքային խումբ, որը մշակեց և հանրային քննարկման ներկայացրեց «Հանրակրթության պետական կրթակարգը» փաստաթուղթ-նախագիծը [1]: Հանրային քննարկման հիման վրա այն վերամշակվեց և ներկայացվեց կառավարության հաստատմանը: Արդյունքում՝ կառավարությունը հաստատեց կրթության ոլորտին վերաբերող հերթական կարևոր փաստաթուղթը [2]:

Այս իրողությունները տեղիք են տալիս մի շարք հարցադրումների:

Առաջին. որքանո՞վ էին անհրաժեշտ ու անհետաձգելի հանրակրթական կրթակարգի մշակումը և նոր պետական կրթական չափորոշիչների ստեղծումը:

Երկրորդ. ի՞նչ իմաստ ունեին նախագծի հանրային քննարկումները և ի՞նչ նշանակություն ունեցան դրանք փաստաթղթի վերջնական տարբերակի ձևավորման գործում:

Երրորդ. ի՞նչ հնարավոր ազդեցություն կունենա կառավարության որոշմամբ հաստատված սույն փաստաթուղթը կրթության զարգացման վրա:

Չորրորդ. որքանո՞վ է արդյունավետ ու գործուն համակարգային փոփոխությունների իրականացման իրագործված մեթոդաբանությունը [3]:

Սույն հոդվածով ներկայացնում ենք որոշակի դիրքորոշում այս հարցադրումների վերաբերյալ:

Հայաստանի հանրակրթությունը

Հարցը քննարկենք՝ առանձնացնելով հանրակրթության մասին առկա հայեցակարգային պատկերացումները և իրական իրողությունը: Ընդ որում, հանրակրթությունը կդիտարկվի որպես համակարգ՝ հետևյալ փոխկապակցված կտրվածքներով.

- Կրթության նպատակներն ու բովանդակությունը
- Ուսումնադաստիարակչական գործընթացները
- Մանկավարժական կադրերը
- Ֆինանսատնտեսական միջոցները
- Կառավարումը, կազմակերպումը, ղեկավարումը:

Ստորև փորձենք պարզաբանել՝ որքանո՞վ է փոխհամաձայնեցված վերոնշյալ փաստաթղթերի բովանդակությունը: Այնուհետև կառանձնացվեն այն կարևոր պրոբլեմները, որոնք բնորոշ են ներկա հանրակրթական իրողությանը: Այս հանգամանքներով էլ հենց պայմանավորված են հանրակրթական կրթակարգի մշակման և նոր պետական կրթական չափորոշիչների ստեղծման անհրաժեշտությունն ու անհետաձգելիությունը:

Հանրակրթության համակարգի հայեցակարգային պատկերացումները մինչև վերջին փաստաթուղթը

Դրանք ներկայացնում են հիմնականում հետևյալ փաստաթղթերը.

1. ՀՀ Սահմանադրությունը
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքը
3. «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը [5]

4. «ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը [6]
5. ԿԳ նախարարության հաստատած հայեցակարգային, կանոնակարգային և ծրագրային փաստաթղթերը
6. Մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման հաստատությունների կանոնադրությունները և գործունեության կազմակերպման ծրագրերը:

Վերոհիշյալ փաստաթղթերով ամրագրված է հետևյալ հայեցակարգային պատկերը.

Կրթության նպատակներն ու բովանդակությունը: Ըստ օրենքի՝

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է (Հոդված 4, կ.2):

ՀՀ կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ եկեղեցին (Հոդված 4, կ. 3):

Ըստ չափորոշիչների՝

Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության նպատակը քաղաքացիների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է:

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և մաթեմատիկական տրամաբանության հիմքերի ուսումնառության ու աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը:

Դժվար չէ համադրել և նկատել օրենքով ամրագրված և չափորոշիչներով սահմանված նպատակների կապակցված չլինելն ու փոխադարձ անհամապատասխանությունը:

Ուսումնադաստիարակչական գործընթացները: Ուսումնադաստիարակչական գործընթացների բնույթը շատ աղքատ է ներկայացված: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Որպես կանոն, ներկայացվում են այս գործընթացների կազմակերպման միջոցները, օրինակ՝ ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, ուսումնական ժամանակացույց

Ըստ զարգացման ծրագրի՝

Ուսուցման և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ու մեթոդների ներդրում:

Մանկավարժական կադրերը: Ըստ զարգացման ծրագրի՝

Գիտամանկավարժական կազմի երիտասարդացում:

Մանկավարժական կադրերի պատրաստման համակարգի կատարելագործում:

Կադրերի որակավորման և վերապատրաստման համակարգի վերապատրաստում:

Ֆինանսատնտեսական միջոցները: Ըստ օրենքի՝

Պետական բյուջետային նպատակային ֆինանսավորում (Հոդված 4, կ. 5):

Ուսումնական հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը (Հոդված 46, կ. 1):

Հարաճուն ֆինանսավորման սկզբունք (Հոդված 46, կ. 2)։

Բարենպաստ հարկային քաղաքականություն (Հոդված 46, կ. 7)։

Կառավարումը, կազմակերպումը, ղեկավարումը: Ըստ օրենքի՝

ՀՀ կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջությունն է (Հոդված 8)։

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարման ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը (Հոդված 4, կ. 4)։

Հանրակրթական հիմնական ծրագրերը ներառում են՝

ա. նախադպրոցական կրթությունը,

բ. տարրական ընդհանուր կրթությունը,

գ. հիմնական ընդհանուր կրթությունը,

դ. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը,

ե. հատուկ ընդհանուր կրթությունը (Հոդված 10, կ. 2)։

Ըստ օրենքի և ԿԳՆ փաստաթղթերի՝

Կազմակերպումը - դաս-դասարանային (Հոդված 46, կ. 1, կ. 2, կ. 6)։

Ուսումնական հաստատությունը կառավարվում է միանձնյա ղեկավարման և ինքնավարության սկզբունքների զուգորդմամբ (Հոդված 40, կ. 3)։

Ըստ զարգացման ծրագրի՝

Կրթության կառավարման ժողովրդավարացում։

Կրթության համակարգի կառավարման ապակենտրոնացում և ուսումնական հաստատությունների ինքնավարության աճ։

Վերոհիշյալ մեջբերումների նպատակն էր ցույց տալ, որ պետական կարևոր փաստաթղթերով արտահայտված հանրակրթության մասին հայեցակարգային պատկերացումները թերի են, ոչ ամբողջական, ոչ կապակցված, հաճախ իրարամերժ:

Հանրակրթության ոլորտի ներկա իրողությունը

Կրթության նպատակներն ու բովանդակությունը: Կրթությունը նպատակաուղղված է հիմնականում գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերմանը, երեխայի ընդհանուր զարգացման և անձի ձևավորման խնդիրները, ներառյալ մտագործունեության տարբեր տեսակների յուրացումն ու հոգևոր արժեքների ձևավորումը, մղված են երկրորդ պլան: Մասնավորաբար, չափից ավելի է կարևորվում սովորողների կողմից տեղեկատվության պասիվ ստացումն ու փաստերի մտապահումը:

Ուսումնադաստիարակչական գործընթացները: Ուսուցման և դաստիարակության գործընթացները խիստ առանձնացված են և մեկուսացված: Դաստիարակությունն իրագործվում է ինքնաբերաբար, տարերային, չհամակարգված:

Ուսուցման գործընթացը խմբային բնույթի է, այն կազմակերպվում է ընդհանուր ճակատով և բացառում է ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովումը: Փաստորեն ուսուցման գործընթացը բնույթով ոչ թե հանրակրթային է, այլ սելեկտիվ [7]:

Մանկավարժական կադրերը: Մանկավարժական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումն իրագործվում են հին ավանդական ձևերով: Բացակայում է կադրերի վերապատրաստման ու կատարելագործման ամբողջական հայեցակարգը: Խիստ նշմարելի են մանկավարժական կադրերի աշխարհայացքային հետամնացությունը և ցածրորակությունը:

Ֆինանսատնտեսական միջոցները: Մանկավարժական կադրերի աշխատավարձերն ունեն սիմվոլիկ նշանակություն և չեն ապահովում մանկավարժների կենսագործունեության նվազագույն պահանջները:

Հանրակրթական հաստատությունների նյութատեխնիկական բազան անբավարար է և խիստ հնացած:

Կառավարումը, կազմակերպումը, ղեկավարումը: Նշմարելի են կառավարման փաստացի բացակայությունը և ղեկավարման կենտրոնացվածությունը: Փոխարենը արդյունքների գնահատումը խիստ ձևականացված է և ապակենտրոնացված, իսկ իրադրության վերլուծությունը կատարվում է տարերայնորեն:

Փոփոխությունները և նորամուծությունները կատարվում են հատվածաբար, չհամակարգված, քաոսային, առանց ընդհանուր ամբողջական գաղափարախոսության (կամ հայեցակարգի):

Հանրակրթության պետական կրթակարգը (նախագիծ). բնույթը և առանձնահատկությունները

Հանրակրթությունը ժամանակակից քաղաքակրթության նվաճումներից է: Հենց հանրակրթական իմաստով վերաձևակերպված կրթական խնդիրները մարդկության համար դրսևորվեցին որպես պետական ու հասարակական կյանքի կազմակերպման բարդ հիմնահարց: Այսօր, փաստորեն, չկա մի երկիր, որը, բավարարված լինելով իր կրթական համակարգի իրավիճակով, չկարևորի այդ համակարգի բարեփոխման խնդիրը (տե՛ս, օրինակ, [13-14], [18-19], [27]) :

Ամենուրեք առաջնահերթ են հատկապես պետական կրթական քաղաքականության, կրթության զարգացման ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների մշակման հիմնահարցերը (տե՛ս, օրինակ, [16-17], [26]):

Պետական կրթակարգը (այսուհետ՝ կրթակարգ) հանրակրթության քաղաքականության հիմնական սկզբունքները, ուսման, ուսուցման և գնահատման չափորոշիչները սահմանող նորմատիվ փաստաթուղթ է:

Կրթակարգը սահմանում է կրթական քաղաքականության հիմնական սկզբունքները, ըստ հանրակրթության ուսումնական բնագավառների և միջնակարգ

հանրակրթական դպրոցի աստիճանների՝ սովորողներին ներկայացվող ընդհանրական պահանջները, հենքային ուսումնական պլանը, ուսումնական առարկաների չափորոշիչների ստեղծման, առարկայացանկի, դպրոցական չափորոշիչների և գնահատման համակարգի ձևավորման սկզբունքները:

Կրթակարգի նախագծով ամրագրված նշանակալից նորույթները

12-ամյա կրթություն: Միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացվում է 12-ամյա ընդհանուր տևողությամբ (ընդգրկում է 6–8 տարեկան երեխաներին), եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

ա) տարրական դպրոց՝ 4 տարի (1-4-րդ դասարաններ)

բ) միջին դպրոց՝ 5 տարի (5-9-րդ դասարաններ)

գ) ավագ դպրոց՝ 3 տարի (10-12-րդ դասարաններ)

Հանրակրթության բովանդակությունը: Հանրակրթության բովանդակությունը ներկայացվում է առանձին ուսումնական բնագավառներով և բովանդակային բաղադրիչներով:

Կրթակարգով սահմանված են հետևյալ բովանդակային բաղադրիչները.

1. գիտելիքների համակարգ
2. ճանաչողության-մտածողության մեթոդներ
3. կարողություններ և հմտություններ՝
   3.1. հաղորդակցական
   3.2. համագործակցային
   3.3. ինքնակազմակերպման
   3.4. ստեղծագործական
4. արժեքային համակարգ:

Կրթակարգով սահմանված են հետևյալ ուսումնական բնագավառները.

1. հայոց լեզու և գրականություն
2. օտար լեզուներ
3. մաթեմատիկա
4. ինֆորմատիկա և ՏՀՏ
5. բնություն
6. անձ և հասարակություն
7. արվեստ
8. տեխնոլոգիա
9. ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

Շրջանավարտի կատարելատիպը: Կրթության նպատակների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցի շրջանավարտը պետք է՝

ա) լինի մարդասեր, ազնիվ, հայրենասեր և պատասխանատվության զգացումով օժտված անհատ.

բ) ճանաչի իր հայրենիքը, տիրապետի մայրենի լեզվին, ընդունի այն արժեքները, որոնք սեփական ժողովրդի գոյատևման և առաջընթացի նախապայմանն են.

գ) ունենա պետական չափորոշիչով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն.

դ) ունենա ինքնուրույն մտածելակերպ, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակություններ, ի զորու լինի ընկալելու, վերլուծելու և կիրառելու հասարակական և տեխնոլոգիական նոր գաղափարներն ու նորամուծությունները.

ե) ի վիճակի լինի դրսևորելու փոխադարձ ըմբռնում և համագործակցություն ապահովող հարաբերություններ ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ.

զ) լինի պետության, հասարակության, բնության և շրջակա միջավայրի լիիրավ մասնիկն ու պաշտպանը.

է) իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, նախաձեռնող և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող, ընտրություն կատարելու և իր ձայնի իրավունքը կիրառելու ունակ քաղաքացի.

ը) կարողանա վերլուծել հասարակական երևույթները, կողմնորոշվել հասարակական իրադարձություններում և ունենա հասարակական իրադրությունների վրա ազդելու գիտելիքներ ու կարողություններ.

թ) իմանա հայ ժողովրդի և համաշխարհային պատմությունն ու ճանաչի մշակութային արժեքները, իրազեկ լինի իր երկրի իրավական, տնտեսական և քաղաքական հիմքերին, գիտության և արվեստի նվաճումներին.

ժ) գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ.

ժա) մտահոգվի ազգային խնդիրների լուծմամբ և պատրաստակամություն դրսևորի հայրենիքին ծառայելու գործում, լինի ազգային ավանդույթների, համամարդկային արժեքների պահպանողն ու փոխանցողը.

ժբ) ունենա այլ լեզուներով հաղորդակցվելու, ժամանակակից հաղորդակցման տեխնոլոգիաներից օգտվելու կարողություններ.

ժգ) լինի հոգեպես և ֆիզիկապես առողջ, իմանա առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառի կյանքում.

ժդ) գիտակցի ընտանիք կազմելու անհրաժեշտությունը, պատրաստ լինի ընտանեկան կյանքին, ինքնուրույն տնտեսավարմանը, ամուսնու և ծնողի դերին, տիրապետի տարրական մանկավարժական կարողությունների.

ժե) կարողանա ճիշտ գնահատել սեփական հնարավորություններն ու վարքը, համակված լինի լավատեսությամբ և սեփական ուժերի հանդեպ վստահությամբ, ցուցաբերի ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու ձգտում և կարողություններ.

ժզ) ունակ լինի իր նախասիրություններին, հետաքրքրություններին և հակումներին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրելու:

Կրթակարգի կատարելագործման հեռանկարները: Կրթակարգն իր կառուցվածքով ճկուն է, մարդու և հասարակության կենսական պահանջներին ու պետության պատվերին համապատասխան փոփոխելի ու զարգացող:

Կրթակարգի վերահսկումն ու գնահատումն իրականացվում են նրա պահանջների կատարմանն աջակցելու, շարունակական զարգացումն ապահովելու, կիրառման ընթացքը գնահատելու և վերահսկելու նպատակով:

Հանրակրթական դպրոցներում և կրթության կառավարման մարմիններում իրականացվում են ներքին և արտաքին վերահսկողություն և գնահատում:

Վերահսկման և գնահատման արդյունքները հիմք են ծառայում կրթակարգի պահանջների վերանայման և կատարելագործման համար, ինչն իրականացվում է կրթակարգի մշակման և կատարելագործման համապատասխան հանրապետական կառույցի կողմից:

Կրթակարգի ներդրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված 12-ամյա միջնակարգ կրթության անցումն ապահովող միջոցառումների ցանկի և ժամանակացույցի համաձայն:

Յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ հանրակրթության պետական կրթակարգում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ:

Կրթակարգի նախագծում տեղ գտած թերությունները և չհաղթահարված պրոբլեմները:

1. Որպեսզի ավելի հստակ պատկերացվեր, թե կրթակարգով նախատեսված հիմնադրույթները ինչով են պայմանավորված և կրթության ոլորտի ինչ նոր որակ են ենթադրում, արժեր, որ կրթակարգում ավելի հստակ և համարձակ

ներկայացվեր կրթության ոլորտի ներկա իրավիճակը: Այս առիթով նախագծում առանձնացված էր միայն հետևյալը.

«Միջնակարգ հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպումը և կրթության բովանդակությունը պետք է բարեփոխվեն՝ հաշվի առնելով մի շարք հիմնախնդիրների առկայությունը: Մասնավորապես՝

- սովորողների ուսումնական բեռնվածությունը չափազանց մեծ է, իսկ կրթության բովանդակային պահանջները բարդ են և ուղղված են բարձր առաջադիմություն ունեցողներին,
- չափից դուրս է կարևորվում սովորողների կողմից տեղեկատվության պասիվ ստացումն ու փաստերի մտապահումը, բավարար չափով ուշադրություն չի դարձվում նրանց ճանաչողական-իմացական հմտությունների զարգացմանը,
- միևնույն դասարանի և տարբեր դասարանների կտրվածքով անբավարար է իրականացվում բովանդակության փոխհամապատասխանեցումը,
- ուսումնական ծրագրերը հիմնականում հրահանգչական բնույթ են կրում,
- առարկայական ծրագրերը բացարձակացնում են ուսուցչի և դասագրքի դերը՝ թերագնահատելով ուսուցման ժամանակակից մեթոդները և այլընտրանքային աղբյուրները,
- գործող չափորոշիչները չեն համապատասխանում XXI դարի պահանջմունքներին»:

2. Կրթակարգով սահմանված են հանրակրթության բովանդակային բաղադրիչները: Սակայն, ինչպես երևում է տարբեր հրապարակումներից ու քննարկումներից, հստակ ընկալում չկա, թե ինչ է նշանակում «կրթության բովանդակության բաղադրիչ» արտահայտությունը: Քանի որ կրթակարգում էլ է բացակայում հարցի բացատրությունը, այս կարևորագույն նորույթը մնում է ընթերցողների և մասնագետների կողմից չնկատված և չկարևորված:

3. Կրթակարգով ամրագրվում է դաս-դասարանային համակարգը՝ իր հիմնական ատրիբուտներով հանդերձ։
4. Կրթակարգում բացակայում են մանկավարժական նորարարության և նորամուծությունների կազմակերպման կարգն ու չափորոշիչները։
5. Մանկավարժական նորարարությունը ընդհանրապես չի կարևորվում;
6. Կրթակարգով հաստատագրված չէ մանկավարժական հասկացությունների համակարգը, իսկ փաստաթղթին բնորոշ է տերմինաբանական խառնաշփոթ։
7. Կրթակարգը լեցուն է անհարկի կրկնություններով և ավելորդ պարբերություններով (նման թերությունները վերացնելով հնարավոր է փաստաթղթի ծավալը կիսով չափ կրճատել)։

Հանրային քննարկումներ

Հանրային քննարկումները կազմակերպվեցին մի շարք մակարդակներով։

Մարզերում և մի շարք խոշոր կրթական հաստատություններում եղան քննարկումներ ԿԳ նախարարի, նախարարության աշխատակիցների, կրթակարգը մշակող խմբի անդամների անմիջական մասնակցությամբ։ Այդ քննարկումներին մասնակցում էին կրթության ոլորտի հարյուրից ավելի ներկայացուցիչներ։ Բովանդակային առումով այդպիսի քննարկումները սակավ արդյունավետ էին։ Դրանք ավելի շատ իմաստավորվում էին որպես քաղաքական ակցիաներ, որոնց ընթացքում նախարարը հավաստում էր իր պատասխանատվության աստիճանը և պատրաստակամությունը՝ իրականացնելու կրթակարգի դրույթները։

Լրատվամիջոցները այս կարևոր հարցի շուրջ բանավեճեր ծավալելու թույլ փորձեր կատարեցին։ Սակայն անկողմնակալ ու բովանդակային իմաստով օգտակար կարելի է համարել մի քանիսը միայն (տե՛ս, օրինակ, [11-12], [24])։

Բազմաթիվ աշխատանքային կոլեկտիվներ և առանձին անհատներ իրենց դիտողություններն ու առաջարկությունները հանձնել էին կրթակարգը մշակող

խմբին՝ կրթակարգի վերամշակման ու կատարելագործման համար [տե՛ս Հավելվածը]: Սակայն դրանց մեծ մասն ուղղակի առաջին ընթերցման տպավորությունների արդյունք էր, ոչ թե կրթակարգի նախագծի լուրջ ուսումնասիրության և կատարելագործման նշանակալից առաջարկ:

Հարկ ենք համարում հատուկ առանձնացնել ՀՀ Կենտրոնական բանկի սեմինարների շրջանակում կազմակերպված քննարկումները [29]: Հինգ սեմինարների ընթացքում (մոտ մեկ ամիս) քննարկվում էին հանրակրթության հիմնախնդիրները տարբեր կտրվածքներով: Այդ քննարկումները նշանակալիորեն պայմանավորեցին նաև սույն հոդվածի կառուցվածքն ու բովանդակությունը, որի համար հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում սեմինարի բոլոր մասնակիցներին:

Առանձնահատուկ էր նաև ԿԳ նախարարության Կրթական բարեփոխումների կենտրոնի և «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիայի կազմակերպած երկօրյա միջոցառումը, որի ծրագրով քննարկվում էին ներկա իրավիճակի և չհաղթահարված պրոբլեմների, հանրակրթության զարգացման ընթացքի և իրականացնելիության, կրթակարգի նորույթների, փաստաթղթի որակի վերաբերյալ հարցեր:

Կառավարության որոշմամբ հաստատված փաստաթուղթը

Վերջապես կառավարությունը 2004թ. մայիսի 27–ի նիստի N20 արձանագրությամբ հավաստեց երկու կարևորագույն փաստաթղթերի իրավասությունը՝ «Հայաստանի հանրակրթության կրթակարգը» և «Հանրակրթության պետական չափորոշիչները»: Առջևում է դեռ այդ փաստաթղթերով ենթադրվող հիմնադրույթների իրականացման հարցը՝ կրթության ոլորտում համակարգային փոփոխությունների իրագործման մեթոդաբանության խնդիրը:

Քննարկենք, թե ինչ նշանակալից տարբերություններ կան կրթակարգի նախագծի և կառավարության կողմից հաստատված փաստաթղթերի միջև:

12-ամյա կրթություն: Այս հարցը քննարկումների ժամանակ ամենաշատն էր քննադատվում և շահարկվում: Սակայն փաստաթղթի վերջնական տարբերակում հարցին վերաբերող տեքստը մնացել է միանգամայն անփոփոխ:

Հանրակրթության բովանդակությունը: Ուշադրություն դարձնենք հետևյալ հատվածի վրա.

«Յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներկայացվում է կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչների միջոցով.

- գիտելիքների համակարգ,
- կարողություններ և հմտություններ,
- ճանաչողական, տրամաբանական,
- հաղորդակցական,
- համագործակցային,
- ստեղծագործական,
- ինքնուրույն գործունեության,
- արժեքային համակարգ»:

Եթե սա համեմատենք նախագծում շարադրված համապատասխան հատվածի հետ (այն զետեղված է սույն հոդվածի նախագծին վերաբերող բաժնում), առաջին հայացքից կթվա, թե կատարվել են ոչ էական խմբագրական փոփոխություններ: Սակայն նկատենք, որ բացակայում է երկրորդ կետով ամրագրված «Ճանաչողության-մտածողության մեթոդներ» արտահայտությունը՝ հանրակրթության բովանդակության բարեփոխման և զարգացման խնդիրների հետ կապված ամենաէական և ամենաարժեքավոր նորույթը [15],[20]:

Շրջանավարտի կատարելատիպը: Այս ենթակետը փաստաթղթի վերջնական տարբերակում վերանվանված է «Միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագիրը»:

Եթե համեմատենք նախագծային տարբերակի հետ, ապա կնկատենք, որ անմեղ թվացող խմբագրական փոփոխությունների հետևանքով աննկատելիորեն դուրս են մղվել արժեքավոր դրույթներ:

Օրինակ՝ նախագծի «ժգ» կետը վերջնական տեքստում վերարտադրվել է «ժա» կետում առանց «լինի հոգեպես և ֆիզիկապես առողջ» արտահայտության: Այսինքն, ըստ նախագծի՝ աշակերտը «պետք է լինի», իսկ ըստ վեջնական փաստաթղթի՝ նա ընդամենը պետք է իմանա և կյանքում կիրառի:

Եթե պահանջում ենք, որ աշակերտը լինի, ուրեմն ամրագրում ենք, որ դպրոցը դրա համար պատասխանատու է, այսինքն հետևում է՝ կդառնա՞ արդյոք աշակերտը այդպիսին և ի՞նչ է դրա համար անհրաժեշտ անել: Իսկ եթե պահանջում ենք, որ նա ընդամենը իմանա, ապա հետևում ենք՝ գիտի՞ նա արդյոք այդ մասին և կարո՞ղ է արդյոք մեր հարցին ճիշտ պատասխանել, այսինքն՝ վերարտադրել սերտած նախադասությունները: Ահա էական տարբերությունը:

Նախագծի «դ» կետը վերաշարադրվել է «ե» կետի տակ, առանց «և որոշումներ կայացնելու ունակություններ, ի զորու լինի ընկալելու, վերլուծելու և կիրառելու հասարակական և տեխնոլոգիական նոր գաղափարներն ու նորամուծությունները» արտահայտության, որն այդ կետի առավել արժեքավոր և իմաստալից կտորն է: Ըստ երևույթին խմբագրական խումբն անզգուշաբար ենթադրել է, թե ոչինչ չասող և ոչինչ չպահանջող «ինքնուրույն մտածելակերպ» արտահայտությունը ներառում է մեր ժամանակների համար շատ կարևոր որակ ներկայացնող «նորը ընկալելու, վերլուծելու և կիրառելու» արտահայտությունը: Խոսքը զուտ ձևական տարանջատումների մասին չէ: Բանն այն է, որ հենց այդ նրբություններից է կախված, թե ինչպիսին պետք է լինեն ուսումնադաստիարակչական ծրագրերը և ինչին ու ինչպես պետք է հետևեն մանկավարժները աշակերտների հետ տասներկու տարի անընդհատ աշխատելիս:

Նախագծի «ը» կետում շարադրված միտքը վերջնական փաստաթղթում ընդհանրապես բացակայում է: Ցավոք, չի գիտակցվել, որ այդ արտահայտությունն առանձնացնում ու մատնանշում է ժամանակակից հանրակրթության բովանդակության առանցքը:

Հետևություններ

Փորձենք ամփոփել՝ առաջնորդվելով նախաբանում ձևակերպված հարցադրումներով:

Առաջին. որքանո՞վ էին անհրաժեշտ ու անհետաձգելի հանրակրթական կրթակարգի մշակումը և նոր պետական կրթական չափորոշիչների ստեղծումը:

Անժխտելի է կրթակարգի մշակման և պետական կրթական չափորոշիչների ստեղծման անհրաժեշտությունը: Ինչպես վերը նշեցինք, կրթության վերաբերյալ հայեցակարգային պատկերացումները թերի են, չհամակարգված, ոչ ամբողջական: Կրթական ոլորտի պրոբլեմները համակարգային բնույթի են: Անժխտելի է նաև, որ նոր փաստաթուղթը ապահովում է որոշակի առաջխաղացում այս ուղղությամբ: Սակայն խնդրի լուծումը դեռ առջևում է:

Երկրորդ. ի՞նչ իմաստ ունեին նախագծի հանրային քննարկումները և ի՞նչ նշանակություն ունեցան դրանք փաստաթղթի վերջնական տարբերակի ձևավորման գործում:

Ցավոք, հանրային քննարկումներն իմաստազրկվեցին: Դրա հիմնական պատճառը նման քննարկումների կազմակերպման և քննարկման արդյունքների ընդհանրացման մեթոդների ու մեխանիզմների բացակայությունն էր: Փաստորեն փաստաթղթի վերջնական տարբերակը իր բովանդակային խորիմաստությամբ զիջում է նախագծին:

Երրորդ. ի՞նչ հնարավոր ազդեցություն կունենա կառավարության որոշմամբ հաստատված սույն փաստաթուղթը կրթության զարգացման հետագա ընթացքի վրա:

Իհարկե, 12-ամյա կրթության անցնելու խնդիրը երկար ժամանակ կապահովի մեր մասնագետների զբաղվածությունը. անհրաժեշտ կլինի մշակել նոր ծրագրեր, ստեղծել նոր դասագրքեր, կազմակերպել ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ... Ցավոք, արտաքնապես արմատական փոփոխությունների տպավորու-

թյուն թողնող այս երևույթը դժվար թե էական ազդեցություն ունենա կրթության որակի բարձրացման հիմնահարցերում:

Սակայն նորարարության ջատագովները նոր հնարավորություններ են ստանում ազատություն տալու իրենց ստեղծագործական պոռթկումներին: Սա, անկասկած, նոր փաստաթղթի ամենաարժեքավոր նշանակությունն է:

Չորրորդ. որքանո՞վ է արդյունավետ ու գործուն համակարգային փոփոխությունների իրականացման իրագործված մոտեցումը:

Նախ՝ ինչ մոտեցման մասին է խոսքը. ստեղծվում է աշխատանքային խումբ, որը մշակում է անհրաժեշտ հիմնադրույթները և կազմում համապատասխան նախագիծը: Այն դրվում է հանրային քննարկման, որից հետո փաստաթուղթը վերամշակվում է և ներկայացվում հաստատման:

Հերթական անգամ կիրառվեց այս մոտեցումը, և ևս մեկ անգամ դրսևորվեց դրա ցածր արդյունավետությունը: Անկասկած, բարի են հանրային կարծիքի հետ հաշվի նստելու շարժառիթները: Սակայն կարևոր նշանակություն և խոր մասնագիտական բնույթ ունեցող հարցերում հասարակական գիտակցության ձևավորման խնդիրը դառնում է ավելի առաջնային ու կարևոր, քան հանրային կարծիքը հաշվի առնելը: Սա արդեն ենթադրում է հասարակական համակարգային փոփոխությունների իրականացման այլ մեթոդաբանություն (տե՛ս, օրինակ, [21-25]):

Առաջարկություններ ստեղծված իրավիճակը շտկելու համար (վերջաբանի փոխարեն)

Առաջին հերթին պետք է կասեցնել այն որոշումը, որի համաձայն արդեն 2006թ. դպրոց հաճախող բոլոր երեխաները պետք է սովորեն 12-ամյա հանրակրթական համակարգում:

Անհրաժեշտ է առանձնացնել հենքային դպրոցներ՝ տասից ոչ ավելի, որտեղ կսկսվեն 12-ամյա կրթության անցման աշխատանքները: Հենց այս դպրոցներում

պետք է մշակվեն և իրականացվեն նոր համակարգին բնորոշ ուսումնադաստիարակչական ծրագրերն ու ուսումնադիդակտիկ նյութերը: Այս դպրոցները պետք է դրսևորվեն որպես մանկավարժական կառուցումների նորարարական տարածքներ, որտեղ համատեղ գործունեություն կծավալեն մանկավարժ գիտնականները, մեթոդիստները, օրենսդիրները, տնտեսագետները, ուսուցիչները, կրթության կազմակերպիչներն ու կառավարիչները:

Այնուհետև անհրաժեշտ է առանձնացնել հանրապետության տարբեր շրջաններն ընդգրկող հարյուր դպրոցներ, որտեղ կներդրվեն վերոնշյալ առաջանցիկ տասը դպրոցներում իրականացված նվաճումները: Միաժամանակ այս դպրոցներում կմշակվեն նորամուծությունների իրականացման ձևերն ու եղանակները, ներառյալ ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման ծրագրերը, մեթոդներն ու միջոցները: Փաստորեն այս դպրոցները նոր համակարգին կանցնեն նախորդներից մեկերկու փուլ ետ մնալով:

Եվ, վերջապես, այս հարյուր տասը դպրոցների հենքի վրա հնարավոր կլինի հանրապետության բոլոր դպրոցներում հիմնավոր անցնել 12-ամյա կրթության համակարգի (այս մեթոդաբանության մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, [25], [30-31]):

Նկատենք, որ նման մոտեցման դեպքում նոր համակարգին զանգվածային անցումը կսկսվի մոտավորապես 2010թ.՝ համեմատաբար նախապատրաստված և ավելի զգույշ [32]:

Նշենք, որ վերոնշյալ մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գործնական կառուցումներին զուգընթաց կատարելագործել նաև կրթակարգի բովանդակությունը: Դա շատ կարևոր է, քանի որ ժամանակակից պահանջները բավարարող նոր կրթական համակարգը ենթադրում է արմատական ավելի խոր փոփոխություններ, քան առաջարկում է կրթակարգը (տե՛ս, օրինակ, [8-10], [28], [34-35]):

Լրացուցիչ պարզաբանումներ և տեղեկություններ

1. Հանրակրթության պետական կրթակարգ (նախագիծ), ՀՀ ԿԳՆ, Երևան, 2004։
   [Որպես կրթակարգը մշակող աշխատանքային խմբի անդամ՝ հարկ եմ համարում վկայել, որ խումբը համալրված էր կրթության ոլորտի բանիմաց ու փորձառու մասնագետներով։ Խմբի անդամները լրջորեն ուսումնասիրել էին համաշխարհային փորձը և առաջավոր մանկավարժագիտական ուղղությունները։ Ներխմբային քննարկումները հարուստ էին բովանդակալից ու արդյունավետ բանավեճերով։ Չնայած այս հոդվածում ներկայացված է իմ խիստ քննադատական վերաբերմունքը, սակայն հավաստում եմ իմ անձնական պատասխանատվությունը կրթակարգի նախագծի յուրաքանչյուր բառի համար]։
2. Հայաստանի հանրակրթության կրթակարգը և պետական չափորոշիչները։ Հաստատված է ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 27-ի նիստի N20 արձանագրությամբ։
3. Ընդհանրապես Հայաստանի Հանրապետության անկախացումը առաջ քաշեց պետականակերտման և հասարակական կյանքի ինքնուրույն կազմակերպման բավականին լուրջ ու դժվար խնդիրներ։ Դրանց թվում կարևորներից մեկը կրթության ոլորտի կազմակերպման, կառավարման, ինչպես նաև ներոլորտային և արտաոլորտային հարաբերությունների կարգավորման խնդիրն է։ Այս խնդիրների բարդությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։
   - Նախ, Խորհրդային Հայաստանում գործում էր արդեն կայացած և արմատավորված կրթական համակարգ, որի իներցիոն ընթացքի հաշվին հնարավոր եղավ հետխորհրդային շրջանում պահպանել ու ապահովել կրթության ոլորտի գործառությունը։ Սակայն նոր պայմաններին հարմարեցված այդ համակարգն իր բնականոն դիմակայությամբ արդեն խոչընդոտում է համակարգային փոփոխություններին [4]։
   - Երկրորդ. տնտեսապես զարգացած երկրները ստեղծել են նաև զարգացած կրթական համակարգեր, որոնք թյուրիմացաբար ընկալվում են որպես ընդօրինակման գայթակղիչ նմուշներ։
   - Երրորդ. պետական, քաղաքական ու հասարակական գործիչների շրջանակներում համատարած է այն կարծիքը, թե իբր նոր զարգացող կամ, այսպես կոչված, անցումային շրջանում գտնվող երկրների համար գոյություն ունեն ընդհանուր օրինա-

չափություններ, որոնք էլ պետք է հանդիսանան այդ երկրների զարգացման ուղեցույցները: Կրթության ոլորտում այս հանգամանքը դրսևորվում է նրանով, որ կրթական նոր համակարգի ստեղծման հարցը վերածվում է առաջավոր երկրների փորձի տեղայնացման ու ներդրման խնդրի:

Ցավոք, առայժմ հասարակական վերակառուցումների բարդ խնդիրները լուծվում են ապրիորի մոտեցումներով, ինչի արդյունքում տիրում է մեթոդաբանական անարխիան:

4. Հետխորհրդային շրջանի կրթության ոլորտն արդեն հասցրել է նշմարվել իր յուրահատուկ պատմությամբ, որի վերլուծությունն ու ուսումնասիրությունը, անկասկած, օգտակար կլինի ոլորտի հետագա զարգացման համար: Առայժմ հետաքրքրություն կարող են ներկայացնել հետևյալ աշխատությունները.
   - *Мкртчян М.А., Мероян Г.О., Давтян Н.К.,* О системе образования Армении, Педагогика, N1, 1998.
   - *Հարությունյան Կ., Դավթյան Ն.* և ուրիշներ, Կրթությունը Հայաստանում, Եր., Անտարես, 2002:
   - *Մկրտչյան Անահիտ,* Ետխորհրդային Հայաստանի կրթության ծրագրման առանձնահատկությունները և սկզբունքները, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, փետրվար, 1997:
5. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչ // Հաստատված է ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 8-ի որոշմամբ:
6. Կրթության զարգացման 2001 – 2005 թվականների պետական ծրագիր // Հայաստանի Հանրապետության Օրենք: Ընդունված է 2001 թվականի հունիսի 26-ին:
7. Ընդհանրապես հանրակրթական գործընթացներում ելակետային պրոբլեմը ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովման հարցն է: Այս պրոբլեմի ելակետայնությունը նշանակում է, որ նրանով են պայմանավորված և նրա ուղղակի կամ անուղղակի հետևանքն են հանրակրթության քիչ թե շատ հետաքրքրություն ներկայացնող մյուս պրոբլեմներն ու դժվարությունները: Նշենք, որ կրթադաստիարակչական գործընթացում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովման հարցը ուսուցչի վարպետու-

թյան կամ աշակերտի ցանկության ու կամքի հարց չէ. այն պայմանավորված է գործընթացի բնույթով և դաս-դասարանային համակարգի շրջանակներում դրսևորվում է որպես անլուծելի պրոբլեմ: Նշենք նաև, որ հանրակրթության բովանդակության պրոբլեմը (հատկապես բովանդակության միավորի որոշման խնդիրը) կարևորագույններից է: Սակայն հենց այն հանգամանքը, որ հասարակական մակարդակով գտնված ու յուրացված չեն ամեն մի երեխայի կողմից անհրաժեշտ կրթության բովանդակության յուրացումը ապահովող մանկավարժական տեխնոլոգիաները, ուսուցման կազմակերպման ներկա եղանակի սահմանափակումների հաղթահարման պրոբլեմը դառնում է առաջնային:

8. *Մկրտչյան Մ.Ա.,* Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, Երևան, 2001, էջ 120:
9. Քաղաքացիական կրթությունը դպրոցում. մանկավարժական գիտամեթոդական հանդես, ## 1–4, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, Էդիտ Պրինտ, Երևան, 2001-2002:
10. Մանկավարժություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր # 1, 2003, ԿԳՆ Կրթական բարեփոխումների կենտրոն:
11. Կլոր սեղան, «Մանկավարժություն» ամսագիր, #4, 2003, էջ 16-26:
12. *Սերոբ Խաչատրյան* // «Կրթություն» շաբաթաթերթ, 2003թ. (հոկտեմբեր)
13. *Дьяченко В.К.*, Новая дидактика, М., Народное образование, 2001.
14. *Сузуки И.,* Реформа образования Японии: навстречу XX1 веку,// Перспективы, Вопросы образования, М., 1991, N1.
15. *Դավթյան Ն.*, Կրթության բովանդակության ներկա հիմնախնդիրները, «Մանկավարժություն» ամսագիր N4, 2003, էջ 6-15:
16. Равные возможности для всех детей. Проект программы реформ в области образования Президента США Джорджа Буша, см. ж. «Народное образование», N 8, 2002, стр. 15-38. Русский перевод из открытого источника: http:// www.mccme.ru/edu .
17. *Дмитриев Д.,* Ответственность государства за образованность граждан, Народное образование, N 10, (декабрь), 1996.

18. *Филиппов В. М.,* Модернизация российского образования, ж. Педагогика, N3, 2004, стр. 3-11.
19. *Джуринский А.Н.,* Реформы зарубежной школы. Надежды и действительность, М., Знание, 1989 (серия ,,Педагогика и психология,, N7)
20. *Давыдов В.В.,* Теория развивающего обучения., М., ИНТОР, 1996.
21. *Громыко Ю.В.,* Проектирование и программирование развития образования, М., МАРО, 1996.
22. *Попов С. В.,* Методология организации общественных изменений, ж. Кентавр, N 26, (июнь 2001г), стр 2-13.
23. *Մկրտչյան Մ.Ա.,* Ուսուցման կոլեկտիվ եղանակի ստեղծման Կրասնոյարսկի փորձը, «Վասն արդարության», 41, 2001:
24. *Արա Մարտիրոսյան*, Ինչպես համատեղել հասարակական կարծիքն ու մասնագիտական միտքը, «Ազգ» օրաթերթ, 1.04. 2004.
25. *Литвинская И.Г.,* Наше общее дело, ж. «Русский язык в Армении», N1, 1999, стр. 47-51.
26. *Краевский В.В., Хуторский А.В.,* Предметное и надпредметное в образовательных стандартах., ж. «Педагогика», N 2, 2003.
27. *Брайан Саймон.* Общество и образование, М., Прогресс, 1989, с. 200.
28. *Зинченко А.П.* Игровая педагогика, Тольяти, МАББ, 2000 (www.circle.ru/kentavr/TEXTS/025ZIN.ZIP).
29. Ավելի քան չորս տարի է, ինչ ՀՀ Կենտրոնական բանկում, նախագահ Տիգրան Սարգսյանի ղեկավարությամբ ընթանում են ընդհանուր մեթոդաբանական սեմինարներ: Այստեղ քննարկվում և մշակվում են ՀՀ զարգացմանը վերաբերող կարևորագույն հարցեր՝ ամենատարբեր ու բազմակողմանի կտրվածքներով: Սեմինարները կազմակերպվում են ամսական երկու անգամ՝ շաբաթ օրերին: Դրանք ունեն հիմնական մասնակիցների կազմ, որոնք ներկայացնում են հասարակության տարբեր ոլորտները:
30. *Литвинская И.Г.,* Полигон будущего., Учительская газета, 1999.
31. *Громыко Ю.В., Дмитриев Д.,* ж. «Народное образование», N 5, 1995.

32. Ցավոք, ԿԳ նախարարության և ՀԲ ԿԾԿ համատեղ ծրագրով մշակվել է ուսուցիչների վերապատրաստման ծրագիր և ձեռնարկ (տե՛ս [33]), որն իր բովանդակությամբ և որակով խիստ անընդունելի է: Նախ այն պատճառով, որ բոլորովին կապ չունի կրթակարգի հետ: Երկրորդ, այն պատճառով, որ չի համապատասխանում ժամանակակից մանկավարժագիտության նվաճումներին: Երրորդ, այն պատճառով, որ չի պարունակում ստեղծագործական նորույթներ, այլ ներկայացնում է մի շարք արտասահմանյան աշխատություններից անհաջող ընտրված նյութերի թարգմանություն: Եվ չորրորդ, այն պատճառով, որ չի ենթարկվել ներքին փորձագիտական քննության:
33. Մասնագիտական զարգացման ձեռնարկ, ԿԳ նախարարության Կրթական բարեփոխումների կենտրոն:
34. *Щедровицкий Г.П.* и др,, Педагогика и логика., М., «Касталь»,1992.
35. *Громыко Ю.В., Давыдов В.В.,* Образование как средство формирования и выращивания практики общественно-регионального развития, Международный региональный журнал Россия-2010, N 1, 1993.

ՀԱՎԵԼՎԱԾ

«Նորավանք» ԳԿՀ-ն իր ներքին քննարկումների արդյունքում ներկայացրել էր դիտողություններ ու առաջարկություններ, որոնց բովանդակությունը հետևյալն էր.

Կարծիք
«Հանրակրթության պետական կրթակարգի» փաստաթղթի մասին (ընդունված է «Նորավանք» ԳԿՀ-ում կազմակերպված քննարկումների հիման վրա)

1. Կրթակարգում բացակայում է օրգանական կապը գիտելիքի ձեռքբերման նախադպրոցական և հետդպրոցական գործընթացի մյուս բաղադրիչների (մանկապարտեզ, պրոֆտեխուսումնարան, բուհ, գիտական և տեխնոլոգիական համակարգ) հետ: Անընդունելի է կրթակարգ մշակել ՀՀ գիտության հայեցակարգի ու գիտական պահանջմունքների համատեքստից դուրս: Սա վկայում է կրթակարգի մշակման մեթոդաբանական սկզբունքային թերության մասին և արժեզրկում է կատարված մեծ ծավալով աշխատանքը: Մասնավորապես ներքոհիշյալ 2 կետում նշված հիմնարար բնույթի բացթողումները պայմանավորված են այս թերությամբ:

2. 12-ամյա դպրոցի դեպքում, հաշվի առնելով նաև զորակոչը, տղաները մագիստրատուրան կավարտեն նվազագույնը 26 տարեկանում, իսկ ասպիրանտուրան՝ 29 տարեկանում (այլընտրանքային ծառայության դեպքում ավելանում է ևս 1.5-2 տարի): Այսինքն՝ տղաները գիտական աշխատանքով կարող են զբաղվել 30 տարեկանի սահմաններում, ինչը մեկնարկային չափազանց անբարենպաստ պայմաններ կստեղծի նրանց համար նեղ մասնագիտացման ուղղությամբ ընթացող համաշխարհային գիտության և գիտական ոլորտում (մասնավորաբար սրընթաց զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում) սուր մրցակցության պայմաններում:

3. Կրթակարգում հիմնավորված չէ նախատեսվող հիմնական փոփոխություններից մեկի 12-ամյա դպրոցի անցնելու անհրաժեշտությունը: 12-րդ դասարանում, ուսումնական տարվա երկրորդ կեսում նախատեսված ոչ ուսուցողական գործընթացը սողանցքներ է թողնում կրկնուսուցման (ռեպետիտորության) և այլ անցանկալի երևույթների համար: Այսպիսով, կրթակարգի հիմնական թեզերից մեկը հեռու է մշակված լինելուց:

4. Կրթակարգը նպատակ ունի ՀՀ քաղաքացու, բայց ոչ նաև հայ ազգի անդամ անհատի ձևավորումը, ինչը, հաշվի առնելով մեր առանձնահատկությունները, ռազմավարական հարց է: Կրթակարգում հանդիպում ենք հակասության. «Հանրակրթության կազմակերպման դրույթները» բաժնում ասվում է, որ կրթությունը «պետք է իրականացվի ազգային արժեքների հենքի վրա», մինչդեռ հենց «Նախաբանում» գրված է. «Կրթակարգը մշակվել է միջազգային ժամանակակից փորձի հիման վրա Հայաստանի Հանրապետության սոցիալական, տնտեսական, քաղաքական, գիտակրթական, մշակութային գործոնների հաշվառմամբ»: Որպես հետևանք նման մոտեցման, կրթակարգում ընդունված է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդը, ինչը հակադրվում է ուսուցչակենտրոն ուսուցմանը, որը ՀՀ-ում ընդունված ու կիրառվող ձևն է՝ ժառանգված դեռևս Մաշտոցի ժամանակներից, ապացուցել է իր արդյունավետությունը և հարիր է մեր հոգեկերտվածքին, ի տարբերություն աշակերտակենտրոն ուսուցման: Հատուկ նշենք, որ յուրաքանչյուր հայեցակարգ կազմելիս միջազգային փորձի հաշվի առնելն, անշուշտ, անհրաժեշտություն է: Սակայն միջազգային փորձի արհեստական ներդրումը, ինչպես ցույց է տալիս հայտնի փորձը, միշտ չէ, որ դրական հետևանքներ է ունենում:

5. Կրթակարգում տեղ են գտել հակասություններ, մինչև իսկ տրամագծորեն հակառակ մեկնաբանությունների տեղիք տվող դրույթներ ու արտահայտություններ, անավարտ կամ կիսատ ձևակերպումներ: Հակասություններ կան նաև կրթակարգի և, ընդհանուր վերցրած, կրթական բարեփոխումների մյուս ծրագրերի միջև: Կրթակարգը մշակող խմբի որոշ անդամների խոստովանությամբ, այս փաստաթղթի ավելի քան կեսը մշակված չէ: Նման երկիմաստությունը, կրթակարգի հնարավոր ընդունման պարագայում, հետագայում անորոշությունների է հանգեցնելու:

Քննարկումների ընթացքում ուշադրություն է դարձվել նաև կրթության ոլորտում վարկերի արդյունավետ ու նպատակային օգտագործման հարցին: Նշվել է, որ Համաշխարհային բանկի կրթական բարեփոխումների համար տրամադրվելիք վարկով կարելի է յուրաքանչյուր դպրոց համալրել առնվազն 20 համակարգչով, այսինքն՝ համակարգիչ/աշակերտ ցուցանիշը դարձնել մոտ 1/20, ներկայիս 1/360 պարագայում:

Երևան, 26 մարտի 2004թ.

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ»